ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 229 (24510), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۱۰) ۲۲۹ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՀԻՆԳՇԱԲԹԻ

9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

آلیک

پنجشنبه – ۱۸ آبان ۱۴۰۲

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

www.alikonline.ir

E-mail: info@alikonline.ir

Նախագահ Ռէյիսին Տաջիկստանի նախագահի հետ համատեղ մամլոյ ասուլիսի ընթացքում.

«Անհրաժեշտ է անյապաղ դադարեցնել յարձակումները Գազայի սիրելի ժողովրդի վրայ»

«ԱԼԻՔ» - Պաշտօնական այցով Տաջիկստան ժամանած Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ այաթ. Մեյէդ Էբրահիմ Ռէյիսին ասել է. «Չնայած սպառնալիքներին ու պատժամիջոցներին, Իսլամական Հանրապետությունը մեծ առաջընթաց է ունեցել տարբեր ոլորտներում, յատկապէս գիտութեան եւ տեխնոլոգիայի ոլորտում»:

Նախագահական կայքէջի համաձայն՝ Տաջիկստանի նախագահ Էմամալի Ռահմանի հետ համատեղ մամուլի ասուլիսում Մեյէդ Էբրահիմ Ռէյիսին յաւելել է. «Իրանի ժողովուրդն ու երիտասարդութիւնը որոշել են պատժամիջոցներն ու սպառնալիքները վերածել հնարաւորութիւնների, եւ այդ հնարաւորութիւններն այսօր տեսանելի են Իսլամական Իրանում»:

Անդրադառնալով Պաղեստինի օկուպացած տարածքներում տեղի ունեցող իրադարձութիւններին այաթ. Ռէյիսին ընդգծել է, որ անհրաժեշտ է անյապաղ դադարեցնել յարձակումները Գազայի ժողովրդի վրայ, եւ վերջ դնել այդ տարածքում իրականացող ցեղասպանութեանն ու մանկասպանութեանը: Նախագահը ընդգծել է. «Այսօր աշխարհի ժողովուրդը պահանջում է անյապաղ վերջ գտնեն այս յարձակումները, անյապաղ դադարեցի Գազայի շրջափակումը, օգնութիւն տրամադրի Պաղեստինի ժողովրդին եւ Պաղեստինի ժողովրդի իրաւունքները ուշադրութեան արժանանան»:

Սաիդ Իրաւանի.

«Իրանի միջուկային խաղաղ ծրագրի հետ կապւած փաստերը չպէտք է խեղաթիւրւեն»

«ԱԼԻՔ» - ՄԱԿ-ում, Իրանի դեսպան եւ մշտական ներկայացուցիչ Ամիր Սաիդ Իրաւանին, ՄԱԿ-ում Գլխաւոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանում, Ատոմական էներգիայի միջազգային գործակալութեան զեկուցի ժամանակ նշել է, որ մենք կառուցողական յարաբերութիւններ ունենք Ատոմական էներգիայի միջազգային գործակալութեան եւ այս կազմակերպութեան քարտուղարութեան հետ, որի նպատակն է լուծել մնացած խնդիրները: Նա ասել

(Շար. 8-րդ էջում)

Մովահեդեան.

«Սիւնիքում արցախահայութեան բնակեցումը լինելու է Հայաստանի այլընտրանքային հակահարւածը ուղղւած Բաքւի նկրտումներին»

«ԱԼԻՔ» - Ալիեւը մտքին է դրել Արցախի հայ բնակչութեանը հազարամեայ բնակավայրից վտարելուց յետոյ, այն վերաբնակեցնել ահաբեկիչներով ու արտատարածաշրջանային երկրների հետախուզական ցանցերի լրտեսներով:

Դոկտ. Էհսան Մովահեդեանն իր տելեգրամային ալիքում խօսելով այս մասին շեշտել է, որ Արցախում իրականացւած էթնիկ զտումներից յետոյ անցել է իր նախագծի յաջորդ էջին, որով տարածաշրջանն, ուղիղ իմաստով, վերածւելու է անկայունութիւն հաղորդող շրջանի:

Փորձագէտն անդրադառնալով Ալիեւի յաջորդ քայլին նշել է, որ առաջիկայ տարիներին Արցախը 140 հազարանոց համայնքով բնակեցնելը տարածաշրջանը կայունութիւնից հեռու պահելու Բաքւի ծրագրի մի մասն է միայն: «Դժւար չէ կռահելը, թէ Բաքւի իշխանութիւնները ում, կամ մարդկային ո՞ր տեսակով են վերաբնակեցնելու Արցախը: Իսկ ծրագրով ենթադրւած 140 հազարը, տասնապատիկ աւելին է, քան խորհրդային տարիներին Արցախում ապրած բաքւեցիների համայնքն էր հաշւառւում»,- նշել է Մովահեդեանը:

«Ալիեւները երէկ Շուշիից յայտարարութիւն են տարածել այն մասին, որ 23 նոր շէնքերով բնակելի համալիր է կառուցւել այնտեղ: Նշւել է, որ այս համալիրում ընդհանուր առմամբ հաստատւելու է 450 ընտանիք: Նոր մարդկանցով բնակեցումը կը սկսի 2024 թւականի ամռանը»,- յաւելել է Մովահեդեանը յիշեցնելով, որ միեւնոյն ժամանակ Ալիֆի ներմուծած սիոնիստ եւ թուրք գործակալներն ու լրտեսները Իրանի հետ Արցախի սահմանին գտնւող դաշտավայրից չեն հեռանում արդէն երեք տարի:

«Կարելի է ենթադրել, որ Ալիֆը նմանատիպ ծրագրեր ունի հէնց Արցախի համար: Ղարաբաղը նոր հակաիրանական կենտրոն դարձնելու մեծ հնարաւորութիւն ունի Բաքուն: Այս առումով առաւել իմաստալից է դառնում այն տեղեկատւութիւնը, որի համաձայն Բաքւի էկոնոմիկայի նախարարութիւնը պաշտօնապէս հաստատել է, որ արտասահմանեան 12 ընկերութիւնների գործունէութիւնը կենտրոնացւելու է Ղարաբաղի

(Շար. 8-րդ էջում)

Ադրբեջանի ԱԳՆ նոյեմբերի 7-ի յայտարարութիւնը հերթական ռազմական ագրեսիայի նախերգանք է

Նոյեմբերի 7-ի Եւրոխորհրդարանում անցկացւեց «Արցախահայութեան իրաւունքները եւ Եւրոմիութիւնը» խորագրով խորհրդաժողով. թէ՝ ինչ կարեւոր արձանագրումներ են արւել խորհրդաժողովին, «Yerevan.Today»-ի հետ զրոյցում մանրամասներ ներկայացրեց ՀՅԴ Հայ Դատի Կենտրոնական գրասենեակի յատուկ ծրագրերի պատասխանատու Գէորգ Ղուկասեանը:

«Առաջինը՝ պէտք է փորձենք խուսափել՝ Արցախում կատարւածը որպէս էթնիկ զտում ներկայացնելուց, որովհետեւ ստացւում է, որ միջազգային իրաւունքում էթնիկ զտումը չունի այն բարձր կարգի իրաւաքաղաքական սահմանումը, ինչ ունի ցեղասպանութիւնը: Փորձագէտների կարծիքն այն է, որ մենք կատարւածը պէտք է ներկայացնենք որպէս ցեղասպանութիւն, այսինքն՝ կատարւածն ամբողջութեամբ տեղաւորւում է ցեղասպանութիւն յանցագործութեան

(Շար. 8-րդ էջում)

Ալիեւ.

«Փառուխի, Քարագլուխի ու միւս գործողութիւնները մեսիջ էին Հայաստանին»

«Վերջին երեք տարիների ընթացքում իրականացւած ռազմական գործողութիւնները, այդ թւում՝ Փառուխի գործողութիւնը, Սարիբաբա-Գիրխըզիզը եւ այլն, զգալիօրէն բարելաւել են մեր ռազմավարական դիրքերը»: Այս մասին այսօր Ստեփանակերտում յայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Նա նշել է, որ դա միաժամանակ մեսիջներ էին՝ ուղղւած Հայաստանին, որ իրենց ոչ ոք եւ ոչինչ չի կարող կանգնեցնել, իրենք են թելադրում պայմաններն Արցախում:

«Յեղափոխական-առաջամարտիկի ճակատագիրը տխուր է եւ գերագնահատւած…
Աւելի լաւ է մահանալ կանգնած, քան ապրել ծնկաչոք»,-

Չէ Գեւարա (1928-1967), արգենտինացի լեգենդար յեղափոխական



ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Տիգրան Աբրահամեան.

«Փաշինեանն ադրբեջանական ախորժակի բաւարարման համար սահուն դաշտ է նախապատրաստում»

Ադրբեջանը ձեւակերպել է Հայաստանից ակնկալւող հերթական զիջումը՝ յայտնի 8 գիւղերը եւ սկսել է դրա ուղղութեամբ ինտենսիւ աշխատել: Այս մասին «Ֆէյսբուք»-ի իր էջում գրել է ԱԺ «Պատիւ ունեմ» խմբակցութեան քարտուղար Տիգրան Աբրահամեանը:

Նա նաեւ նշել է. «Ընդորում՝ Բաքուն յատկապէս դրսում աշխատում է այն տրամաբանութեան մէջ, որ Հայաստանի իշխանութիւնն ինքն է հրապարակային խօսել դրանց ադրբեջանական պատկանելիութեան մասին:

Սա շատ նման է այն իրավիճակին, երբ Փաշինեանական իշխանութիւնը նախ Արցախը հռչակեց Ադրբեջան, նշեց, որ Արցախը կարող է ապագայ ունենալ Ադրբեջանի կազմում, իսկ յետոյ Ադրբեջանն այդ յայտարարութիւններն օգտագործելով տարբեր կենտրոնների հետ երկխօսութիւնում, յարձակում սկսեց Արցախի դէմ:

Էլ ի՞նչ ձեւով է լինում յանձնումը. Փաշինեանն ադրբեջանական ախորժակի բաւարարման համար սահուն դաշտ է նախապատրաստում»:

Հայաստանը երբեք պէտք չէ, որ Թուրքիայի դէմ գործի փոքր երկրի դիրքից



«Իրաւունք» թերթը գրում է.

«Անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւնների «մերձեցման» գործընթացին, Ստամբուլի հայկական «Ակօս» պարբերականի հայերէն բաժնի պատասխանատու խմբագիր Բագրատ Էստուկեանն ասաց.

«Մենք բանակցութիւններով չէ, որ սահմանը փակել ենք, հետեւաբար բանակցելու կարիք չունենք: Եթէ Հայաստանի կառավարութիւնը դիմի բանակցութիւնների, սա կը լինի նրա սխալը. թուրքերը փակել են, իրենք էլ թող բացեն: Մենք մինչ օրս որեւէ պայման չենք դնում՝ի տարբերութիւն թուրքական կողմի: Մենք անելու ոչինչ չունենք. կուզէք՝ բացէք, չէք ուզի՝ ոչ, ձեր խնդիրն է, մեր սահմանը միշտ բաց է: Մեզ համար Թուրքիան թշնամի երկիր է, որովհետեւ մեր դէմ շրջափակում է իրականացնում: Մենք Թուրքիայի հետ խօսելիք չունենք: Այս ռազմավարութիւնից ամենաշատը ես ինքս՝ Բագրատս եմ տուժում: Բայց պէտք չէ մեզ նկատի առնել, սա երկրի քաղաքականութիւն է: Հայաստանը երբեք պէտք չէ, որ Թուրքիայի դէմ գործի փոքր երկրի դիրքից:

Պէտք է ասի, որ մենք հաւասար անկախ պետութիւններ ենք, ես ունեմ իմ զօրքը, ունեմ իմ համակարգերը, դու քո գործին գնայ: Ինձ համար նշանակութիւն չունի, որ ինձ հետ դիւանագիտական յարաբերութիւններ չես հաստատել. դա թշնամական վերաբերմունք է»:

Արցախի նախկին ղեկավարների եւ Բաքւում պահւող միւսների առողջական վիճակի, պահման պայմանների մասին տեղեկութիւններ են փոխանցւել ընտանիքներին

Սեպտեմբերի 19-20-ի ռազմական ագրեսիայի հետեւանքով Ադրբեջանի կողմից գերեվարուած 16 անձանց, այդ թւում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների, զինուորականների եւ խաղաղ բնակիչների վերաբերեալ տեղեկութիւններ են փոխանցել նրանց ընտանիքներին:

Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցչի խօսնակն «Ազատութեանը» փոխանցել է, որ գերեվարուած անձանց հարազատներին են տրամադրւել նրանց առողջական վիճակի, պահման պայմանների մասին տեղեկներ, նաեւ նրանց լուսանկարները:

Այդ տեղեկները Հայաստանի ներկայացուցիչը ստացել է Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի (ՄԻԵԴ) միջոցով: Միջազգային դատարանը Հայաստանի խնդրանքով դիմել է Ադրբեջանին, Բաքուն էլ գերեվարուած անձանց վերաբերեալ տեղեկները փոխանցել է ՄԻԵԴ-ին:

Թէ արդեօք 16 գերիները խոշտանգւել են, արդեօք նրանց իրաւունքները պաշտպանւում են, առողջական խնդիրներ ունեն, թէ ոչ՝ այս հարցերի շուրջ տեղեկութիւններ դեռեւս չեն տրամադրւում:

Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցչի խօսնակ Յասմիկ Սամուէլեանն ասաց, որ այժմ առարկութիւնների փուլն է: Այսինքն, եթէ հայկական կողմը գերիների վերաբերեալ ստացած տեղեկների հիման մարդու իրաւունքների խախտումներ արձանագրի, ապա առարկութիւնները կը ներկայացնի միջազգային դատարանին:

«Tert.am»

Սեւակ Յակոբեան.

«Առաջին պատերազմում մեր յաղթանակը մնաց անտէր. Ալիեւի յաղթանակն էլ է անտէր»



Մենք պառադներ էինք անում Ստեփանակերտում, բայց առաջին պատերազմում մեր յաղթանակը մնաց անտէր: Այս մասին գրել է «Yerevan Today»-ի խմբագիր Սեւակ Յակոբեանը:

Նա, մասնաւորապէս, նշել է. «Մենք չկարողացանք ամրացնել այդ յաղթանակը, դարձնել ժողովրդական: Եկան նիկոլենք եւ քանի որ ամրացած չէր յաղթանակը, հերոսներին սկսեցին «խուռդել», Վերածննդի հրապարակում պառադները կերտողներից ու ղեկավարածներից ում կարողացան՝ տարան գերեզման, նստեցրեցին բանտեր, յանցագործի՝ անուն կպցրին, ում կարողացան՝ գլուխները կերան:

Յաղթանակի տէրերին չպահեցինք, ու անտէր մնաց յաղթանակը:

Յաղթանակը փոխեցինք բանանի գնի հետ, փոխեցինք արագաչափերը հանելու խոստման հետ, փոխեցինք ստերի, մանիպուլիացիների, խոստումների հետ, ամէն մէկը իր անյաջողութիւնները այլոց յաջողութիւնների պատճառը հնարելու հետ: Այո, անտէր մնաց:

Ալիեւի յաղթանակն էլ ա անտէր: Նայէք իրենց զօրահանդէսի կադրերը. տրիբունայում մենակ Ալիեւն ա, չկայ հերոս, չկայ գեներալ, չկայ զինւոր. մենակ է: Այսինքն՝ ոնց որ մեզ մօտ պարտութեան սիմոլն ա Նիկոլը, էնտեղ էլ իրենց մօտ յաղթանակի սիմոլը Ալիեւն ա, մենակ ինքը ու սա ապացոյցն է, որ իր հեռանալուց յետոյ (կարեւոր չէ՝ իշխանութիւնից, թէ կեանքից) դաւաճանութեամբ, խարդաւանքներով ու այլնով ձեռք բերուած յաղթանակը մնալու է անտէր»:

«Yerkir.am»

Գագիկ Համբարեան.

«Նիկոլ Արցախատուի ամենամեծ ձեռքբերումը»

Քաղաքագէտ Գագիկ Համբարեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրում է.

«Անշնորհակալ Իլհամն ու Մեհրիբանը Ստեփանակերտ չէին հրաւիրել մեր պարտութեան եւ թուրքերի յաղթանակի հեղինակներ Նիկոլ Անհողին եւ Աննա-Էրատոյին...:

Եթէ այդ երկուսը չլինէին Ադրբեջանի բռնապետը ինչպէս ծոծրակը չի տեսնում, այնպէս էլ այսօրւայ Ստեփանակերտի զօրահանդէսը չէր տեսնի...:

Նոյնիսկ «վարդագոյն» երազում Ալիեւը սա չէր պատկերացնում...:

Դաւաճան Նիկոլն ու իր թիմը «տրոյական ձի» էին, որոնք իշխանութեան եկան ու խայտառակեցին հայութեանը եւ Հայաստանը...»:

«Yerkir.am»

Մետաքսէ Յակոբեան.

«Նիկոլնե՛ր, ամէն բան արեցիք, որ քոչւորը պղծի հայի արիւնով ներծծւած հայի հայրենիքը»



«Արցախը չի հանդարտւում... Արցախը սիրտ ու հոգի ունի... Արցախը ձայն ունի...ու անդադար կանչում է... Քանի դեռ կամ, քանի դեռ շնչում եմ, քայլում եմ, չեմ դադարելու գործել: Պիտի գնամ...»,- գրել է Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի «Արդարութիւն» խմբակցութեան անդամ Մետաքսէ Յակոբեանը:

Նա նշել է. «նիկոլնե՛ր, դուք խլեցիք իմ կեանքը, իմ հայրենիքը, հարազատներիս, ընկերներիս, տունս, սեւ մանգաղով հնձեցիք Արցախը... ամէն բան արեցիք, որ քոչւորը պղծի ՀԱՅԻ ԱՐՅԻՒՆՈՎ ՆԵՐԾԾՒԱԾ ՀԱՅԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ... չարիքն անհատոյց չի մնում...»:

«Panorama.am»

Բագրատ Եսայեան.

«Նոր ձեւով ընթերցողին ներկայանալու խնդիր ունենք, նոր գործիքներ օգտագործելու համացանցի զարգացման ժամանակ»

Հարցազրոյց «Երկիր մեդիա» հեռուստաընկերութեան տնօրէն Բագրատ Եսայեանի հետ:

-Ինչից սկսեցիք, թէ՛ որպէս Դաշնակցական, թէ՛ որպէս «Երկիր մեդիա» հեռուստաընկերութեան տնօրէն:

-Իմ սերնդի մեծամասնութեան նման ամէն ինչ սկսեց Արցախեան վերազարթօնքից, 1988 թւականին: Երբ սկսեց ուսանողական շարժումը, այն ժամանակ ես համալսարանի պատմութեան ֆակուլտետի ուսանող էի, եւ բնականաբար, պատմութեան ֆակուլտետում ուսանողների մեծամասնութիւնը անմիջապէս ներգրաւուեց շարժմանը եւ կարելի է ասել այդ օրւանից մինչ այսօր քաղաքական բոլոր գործընթացների մէջ եմ եղել:

Յաջորդ տարին Արցախեան շարժումը վայրիվերումներով էր գնում: 1988 թւականի վերջին Հայաստանում յատուկ դրութիւն հաստատուեց: Արգելւեցին բոլոր ցոյցերը, դրանից յետոյ, 1989 թւականին երկարատեւ այդ արգելքներից եռամսեայ եւ քառամսեայ արգելքներից յետոյ, որպէս ուսանողներ յատուկ դրութեան պայմաններում կազմակերպեցինք բողոքի ցոյցեր, որի արդիւնքում ձերբակալւեցի մէկ ամսեայ կալանքով: Դուրս գալուց յետոյ, ինձ հետ կապ հաստատեց Դաշնակցական մի խմբագիր: Ասելով, որ ցանկանում է հարցազրոյց անել, եւ այդ խմբագիրը պարզւեց Կիրօ Մանոյեանն է: 1989 թւականի յունիսից սկսած առաջին հարցազրոյցից յետոյ եղան նաեւ այլ հանդիպումներ Դաշնակցական պատասխանատուների, գործիչների հետ: 1989 թւականից սկսեցի աշխատել արդէն, որպէս Դաշնակցական: Այն ժամանակ 1989 թւականին արդէն տարբեր կոմիտէներ էին ստեղծւել: Առաջիններից մէկը եղաւ այն կոմիտէն, որի անդամն էի ես: 34 տարւայ Դաշնակցական կենսագրութիւն ունեմ ու սա դեռ սկիզբն է:

-Պարոն Եսայեան, երկար տարիներ աշխատելով մամուլում, կասէք խնդրեմ հայկական մամուլը ինչի կարիքն ունի այսօր: Արցախի կորըստից յետոյ համահայկական մամուլի անելիքն ինչ է, արդեօք բաւարար են արժէքները վեր հանող, ամփոփող հրապարակումները: Ինչ չափանիշեր պէտք է ունենայ հայկական մամուլի գործիչը:

-Եթէ խօսում ենք համահայկական մամուլի մասին, ապա խնդիրները անհրաժեշտ է տարանջատել միմեանցից, որովհետեւ հայաստանեան մամուլը դիմագրաւում է լուրջ դժւարութիւնների: Ինչպէս կեանքի բոլոր ոլորտները, այնպէս էլ մամուլը խիստ նիւթականացած եւ առեւտրականացած է, այսինքն գրւում է այն ինչ, որ լաւ կը վաճառւի: Յաճախ աչքաթող է արւում «հայկական» մամուլը: Խնդիրը, որը ունի հայութիւնը այն վեր չի հանւում, այն հիմնարար խնդիրները, լրջագոյն մարտահրաւէրները, որին դիմագրաւում է հայ ժողովուրդը եւ Հայաստանը վեր չի հանւում: Խօսւում է պահի խնդիրներից, սկանդալներից, բառավէճերից եւ ոչ թէ բովանդակային բանավէճերից, սա յանգեցնում է հայկական մամուլի ծանծաղացման: Խորութիւն, բացարձակապէս չեմ տեսնում: Այդ բացը պէտք է լրացւի, զանգւածային լրատւամիջոցները եւ մամուլը ամենահզօր գործիքներից են, սա նաեւ մեզ պարտադրւած վիճակ է, որովհետեւ տասնամեակներ շարունակ, արտասահմանեան նաեւ պետական եւ ոչ-պետական գրանտներով կազմակերպութիւններ եւ անձեր, թեմաներ էին թելադրում Հայաստանի մամուլին, որոնք շարունակաբար արծարծում էին սեռային բազմազանութեան, հարեւանների հետ խաղաղութեան մասին: Այսինքն դրսից պարտադրւած օրակարգերը, որը շարունակական ֆինանսաւորւում էր գրանտային կազմակերպութիւնների, պետութիւնների կողմից: Հիմնական նրանց խօսակցութիւնը զանգւածային լրատւամիջոցներով էր ծաւալւում: Այսինքն, ցաւօք սրտի, մինչեւ 2018 թւականը եղած իշխանութիւնը, բաւարար նպատակաուղղւած ջանքեր չգործադրեց եւ միջոցներ չտրամադրեց հայկական օրակարգի քննարկման համար հայ հասարակութեան մէջ: Սա յանգեցրեց հայկական հասարակութեան մէջ արժեհամակարգային ուղենիշերի աստիճանաբար ջնջմանը եւ մենք յայտնւեցինք մի իրավիճակում, որ հասարակութիւնը կատարելապէս ապակողմնորոշւած էր: 2018 թւականը արդիւնք էր նաեւ դրա, երբ մենք չունէինք յստակ ազգային արժեհամակարգային ուղենիշեր, որոնց պահպանումը պէտք է լինէր առաջին հերթին իշխանութեան հիմնական գործունէութեան ուղղութիւններից մէկը, եւ սա համարում եմ հայկական մամուլի ամենամեծ բացթողումը:

Սփիւռքի համար, կարծում եմ աւելի հեշտ է, որովհետեւ կայացած համայնքներում երբ արդէն կայ համայնքային կեանք եւ համայնքային կառոյցներ, որոնք որոշ չափով ինքնաբաւ են ինքնաբաւութեան ձգտումով, այդտեղ մամուլը յստակ իր խնդիրներն է նշանակել եւ տասնամեակներ շարունակ, որոշ չափով հայկական ազգային հանրութեան խնդիրների արծարծումը դառնում է Սփիւռքի հայկական մամուլի հիմնական նարատիւներից մէկը: Սա նպաստում է, որ ազգային հարցերը, օրակարգերը աւելի խորութեամբ քննարկւեն սփիւռքեան մամուլում:

Ինչ խօսք ֆինանսական միջոցները նաեւ շատ կարեւոր են: Միջին Արեւելքի բազմաթիւ երկրներ դիմագրաւում են տնտեսական դժւարութիւններին: Մերձաւոր Արեւելքի բոլոր համայնքներում շատ դժւար իրավիճակ է ստեղծւում, եւ այստեղ նոյնպէս հայկական մամուլի պահելու հարց ունենք: Այսինքն նոր ձեւով ընթերցողին ներկայանալու խնդիր ունենք, նոր գործիքներ օգտագործելու համացանցի զարգացման ժամանակ, որը խիստ կարեւոր է:

-Արցախի հարցում վճռահատութեան առումով, ինչպիսին պէտք է լինի համահայկական մամուլի գործունէութիւնը: Ինչպէս է հնարաւոր նոր համագործակցութեան մոդելներ ձեւաւորել համահայկական մամուլի միջեւ:

-Իսկապէս ազգային գաղափարախօսութեան հետեւորդ մամուլը շատ ծանր իրավիճակում է գտնւում, որովհետեւ ՀՀ-ում պետական իշխանութիւնը գրաւող խմբակը բացարձակ հակառակ պատկերացումն ունի տասնամեակներով մեր մէջ դաստիարակւած արժեհամակարգի հետ, որին մենք հետեւում էինք, այսինքն վարչապետի պաշտօնը զբաղեցնող անձնաւորութիւնը յայտարարում եւ հակադրում է երկու բան, ասելով պետութիւնը հէնց հայրենիքն է, այսինքն պետութեան սահմանից դուրս, հայրենիք գոյութիւն չունի: Սա յստակ ուղերձ է ամբողջ հայ ժողովրդին՝ մշեցիներին, վանեցիներին, կարսեցիների ժառանգներին, որ այս անձնաւորութիւնը մեր հայրենիքի այդ հատւածները, որոնց հայրենիք լինելը հազարամեակներով նիւթական մշակութային ժառանգներով ապացուցւած է հայկական հայրենիք է, հայերի բնօրրան է, այդ անձնաւորութիւնը, հայրենիքի այդ հատւածները ջնջում է հայրենիքի քարտէզից:

Ես վստահ եմ, որ այդ անձնաւորութիւնը նոյն գիտակցութեամբ, եւ այդ ժամանակւանից նրա հիւանդ ուղեղում, համոզում է գոյութիւն ունեցել, որ Արցախը քանի որ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան սահմանների մէջ չի եղել, հետեւաբար մեր հայրենիքի մաս չի կազմում, եւ պէտք է ամէն կերպ ազատւել Արցախից: Քանի որ կար իր հայրենի հողին կապւած Արցախի ժողովուրդ, այն գնաց ընդհուպ մինչեւ գիտակցւած ցեղասպանութեան յանցակցութեան: Սարսափեցնում է նրան, որ հայ ժողովուրդը կարող է իր մտքում ունենալ մեծ հայրենիքի՝ ազատ, անկախ, միացեալ հայրենիքի տեսլական: Հէնց այստեղ է, որ պէտք է հասկանանք այս խմբակը որեւէ կապ չունի ազգային մտածողութեան, ազգային պետութեան, հայ ժողովրդի դարաւոր իղձերի եւ տեսլականի հետ: Սրանք ընդամէնը ժամիշխաններ են, որոնց խնդիրն է յագուրդ տալով երկու հարեւանների գիշատիչ ախոր ժակին յայտարարութիւն անեն, որ մենք հայրենիք այլեւս այն տարողութեամբ ինչ որ իւրաքանչիւր հայի մտքում կայ աշխարհի ցանկացած անկիւնում, այլեւս չունենք այդ հայրենիքը: Մենք ընդամէնը 29800 քմ. ունենք եւ այս Հայաստանն ենք համարում հայրենիք եւ դրանից դուրս որեւէ բան հայկական չենք համարում: Ուրեմն սա է հիմնական խնդիրը, նարատիւը, եւ բաժանարար գիծը այսօրւայ իշխանութեան եւ ազգային մտածողութիւն ունեցող մեր ժողովրդի միջեւ: Սրա շուրջ է, որ պէտք է հայ մամուլը իր ձայնը բարձրացնի այս ուղղութեամբ իր ամբողջ պոտենցիալով: Բանն այն է, որ իշխանական խմբակը տիրապետում է պետական բոլոր լծակներին, թէ՛ ճնշման, թէ՛ ֆինանսական, թէ՛ բիզնեսի վրայ ազդելու առումով եւ այս հարցում ունի նաեւ իր Արեւմտեան աջակիցների անվերապահ հովանաւորութիւնը, ՀՀ-ում փակւել է երկու ընդդիմադիր հեռուստաալիք «Երկիր մեդիա»-ն եւ «Հ2» հեռուստաալիքը: Որեւէ խօսք չկայ նրանց կողմից Հայաստանում ազատ մամուլի նկատմամբ ճնշումների մասին: Արեւմտեան լրագրողական կազմակերպութիւնները ծրպտուն չեն հանում: Այստեղ նաեւ այլ հարցեր են առաջանում, որովհետեւ մամուլը առանց տնտեսական եւ ֆինանսական միջոցների դատապարտւած է: Բայց կարծում եմ դա միանշանակ չէ, եւ աշխարհում բացի պետական բիւջէներից, կայ նաեւ հայկական ազգային կապիտալ: Մեր օրակարգի հարց պէտք է իսկապէս դառնայ հայկական կապիտալը, եթէ այն հայկական արմատներ ունի: Սովորաբար, ասում են կապիտալը ազգային հիմքեր չունի, բայց նոյնիսկ բիզնեսների դէպքում կան իսկապէս հայկական մտածողութիւն ունեցող մարդիկ եւ կապիտալ, որ ունի զուտ ազգային արմատ եւ նպատակներ: Եւ այդպիսի կառոյցներ կան ինչպէս՝ Դաշնակցութիւնը, Համազգայինը, Հայ Բարեգործական Ընդհանուր միութիւնը, եթէ իսկապէս այդ կազմակերպութիւնների համար կարեւոր է ազգային, հայկական արժեհամակարգը եւ հայկական տեսլականը պէտք է ձեռնամուխ լինել այս տեսլականին ծառայող կազմակերպութիւններին, ԶԼՄ-ներին, տնտեսապէս, ֆինանսապէս աջակցող մեխանիզմի ստեղծմանը: Որովհետեւ պետութիւնից, իշխանութիւնից, պետական բիւջէից արեւմտեան աղբիւրներից, մենք աջակցութեան որեւէ յոյս չենք կարող ունենալ: Նրանք հետապնդում են բոլորովին ուրիշ նպատակներ, ուրիշ տեսակի հայկական հասարակութիւն են ցանկանում ունենալ: Հլու-հնազանդ հաշտւած 29 800 քմ.-ի վրայ իրենց գոյութիւնը պահպանող էթնիկ միաւոր, որը սպասարկելու է մեր դարաւոր թշնամիների տնտեսական շահերին:

-Ինչպէս է Սփիւռքից ստացած էներգիան, հայրենասիրութեան, գործի մղելու առումով: Հետեւում են Ձեզ, մոտիւացնող է, պահանջատիրական է յետադարձ կապը, որովհետեւ «Երկիր մեդիա»-ն, որպէս հայրենիքում աշխատող հեռուստաընկերութիւն նաեւ համահայկական հասարակութեան միտքն առաջնորդող եւ մոբիլիզացնող մեծ ներուժ ունի:

-Նոր հնարաւորութիւն է ստեղծւել համացանցի այս մակարդակի հասնելուց յետոյ: Նոր հնարաւորութիւններ է ստեղծել «Երկիր մեդիա»-ի եւ մասնաւորապէս սփիւռքեան տարբեր համայնքներում գործող հայկական մամուլների համար: Կարծում եմ այս պայմաններում մենք նորովի պէտք է արձագանգենք մարտահրաւէրներին, առաջին հերթին: Կարծում եմ, նոր իրավիճակներում «Երկիր մեդիա»-ի եւ նրա ստեղծած արտադրանքի կարիքը կայ նաեւ սփիւռքեան համայնքներում, որովհետեւ բազմաթիւ իմ շփումները գործընկերների հետ բերում են այն համոզման, որ այն ծառայութիւնները եւ արտադրանքը, որը ստեղծում ենք կամ մատուցում ենք սփիւռքեան շատ համայնքներին հասանելի չեն: Բաւականին մեծ տեխնիկական յագեցւածութիւն է պահանջում այն ինչ, որ «Երկիր մեդիա»-ն լաւ կամ վատ այսօր կատարում է: Այս առումով «Երկիր մեդիա»-ի կարիքը կայ, եւ ես դա զգում եմ նաեւ իմ խօսակցութիւններից, սփիւռքեան ընկերների հետ զրոյցներում: Իսկապէս սա շատ պարտաւորեցնող է, կարծում եմ մենք շատ արագ պէտք է որոշակի լուծումների յանգենք ինչպէս հասանելի դառնանք սփիւռքեան հայրենակիցներին սա ամենաառաջինը: Երկրորդը՝ ստեղծենք այնպիսի բովանդակութիւն, որ նաեւ «Երկիր մեդիա»-ն ինքը աւելի հետաքրքիր լինի մեր Սփիւռքի հայրենակիցների համար: Երրորդը՝ կարողանանք սպասարկել նաեւ Սփիւռքի այն լրատւամիջոցներին, ովքեր ունեն հայաստանեան բովանդակութեան կարիք, որովհետեւ Բէյրութում, Թեհրանում, Լոս Անջելէսում նստած շատ բարդ է ստեղծել հայաստանեան բովանդակութիւն եւ ներկայացնել ներհայաստանեան իրողութիւնները: Այս հնարաւորութիւնը «Երկիր մեդիա»-ն ունի եւ կարծում եմ լրջօրէն պէտք է մտածել, թէ սա ինչպէս ենք հասցնելու Սփիւռքի մեր համայնքներ:

-Իհարկէ, նաեւ անհրաժեշտ է լրջօրէն մտածել սփիւռքեան մամուլների հետ համագործակցութիւնների խորացման մասին: Շնորհակալ եմ, պարոն Եսայեան:

-Ես, նոյնպէս շնորհակալ եմ:

Զրոյցը՝
ՍԻՒՆԵ ՖԱՐՄԱՆԵԱՆԻ

Մետաքսէ Յակոբեան.

«Անկախ իր տեղակայման վայրից, ԱՀ ԱԺ-ն գործելու է՝ անկախ նրանից, որ դա որեւէ մէկին դուր գալիս է, թէ՞ չի գալիս»

«Aravot.am»-ը զրուցել է Արցախի խորհրդարանի պատգամաւոր Մետաքսէ Յակոբեանի հետ:

-ՀՀ յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էդմոն Մարուքեանն, օրերս, «24news»-ի, «Հետագիծ Նարեկ Գալստեանի հետ» հաղորդման ժամանակ, պատասխանելով Արցախի պետական ինստիտուտների գործունէութեան հնարաւորութիւնների մասին հարցին, յայտարարել էր. «ՀՀ-ում Արցախի ոչ մի ինստիտուտ չի գործելու, դա ազգային անվտանգութեան հարց է»: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք այդ յայտարարութիւնը:

-Արցախի պետական կառոյցները ենթարկւում են ԱՀ նախագահին, իսկ ԱՀ նախագահը հրամանագիր ստորագրեց, որում նշւում էր, որ բոլոր գերատեսչութիւնների ղեկավարները, ընտրովի մարմինները գործելու են եւ գործելու են հասարակական հիմունքներով: Երկրի նախագահն, իհարկէ, իրաւունք ունի, այսպէս ասենք՝ բաց թողնելու կառավարութեանը, բայց ընտրովի մարմինները երկրի նախագահի իրաւասութեան տակ չեն եւ նա չի կարող այդ կառոյցները լուծարել: Որեւէ մարմին, մարդ չկայ, որն ունի իրաւունք լուծարելու Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը: ԱԺ-ն կարող է ինքնալուծարւել, որը տեղի չի ունեցել, չի ունենում եւ չի էլ ունենալու: Անկախ իր տեղակայման վայրից, ԱՀ ԱԺ-ն գործելու է՝ անկախ նրանից, որ դա որեւէ մէկին դուր գալիս է, թէ՞ չի գալիս: Դա կարող է լինել իր անձնական կարծիքը:

Ինչ վերաբերւում է անվտանգային բաղադրիչներին, հայրենիքը վտանգած, հայրենիքի մեծ մասը յանձնածները, կարծում եմ, ընդհանրապէս իրաւունք չունեն անվըստանգութիւնից խօսելու, որովհետեւ իրենք իրենց գոյութեամբ արդէն վտանգ են ներկայացնում հայրենիքի համար: Հայրենիք ասելիս, ես չեմ առանձնացնում, ես նկատի ունեմ Հայաստանն ու Արցախը: Եւ այս պարագայում, երբ մենք որեւէ քայլ ենք անում, մեզ համար առաջնայինն անվտանգային բաղադրիչների պահպանումն է՝ դա կը վերաբերւի ՀՀ-ին, թէ՛ Բաքւում գերեվարւած մեր հորհրդանիշերին, թէ՛ մեր հայրենակիցներին: Մեր բոլոր քայլերը բխում են՝ ելնելով անվտանգութեան բաղադրիչներից, մենք որեւէ քայլ, գործողութիւն չենք անի, խօսք չենք ասի, որը կը վնասի ՀՀ-ին, Արցախի հիմնախնդրին կամ Բաքւի բանտերում գտնւող մեր հայրենակիցներին: Այնպէս որ, մենք բոլորից լաւ գիտենք, թէ ի՞նչ է նշանակում եւ ինչքա՞ն է կարեւոր հայրենիքի ու երկրի անվտանգութիւնը ու իրենք չէ, որ մեզ պէտք է այդ մասին ասեն: Մենք հինգ տարի շարունակ փորձում էինք մարդկանց բացատրել, որ պէտք է ազատւել այս իշխանութիւններից, որոնք պատճառ դարձան հայրենիքի յանձնմանը, վտանգեցին մեր երեխաների կեանքերը, հազարաւոր զոհերի պատճառ դարձան:

-Եթէ հիպոթետիկ ընդունենք Էդմոն Մարուքեանի ասածը, Ձեր կարծիքով Արցախի իշխանութեան գործունէութիւնը Հայաստանում ինչով կարող է սպառնալ ՀՀ անվտանգութեանը, դա կարող է ընկալւել իբրեւ «ռեւանշիստական» քայլ:

-Դա ներկայացնելու կամ մատուցելու հարց է: Տեսէք, հիմա մեզ յորդորում են, պահանջում են՝ անձնագրերը փոխել եւ դրա անունը դնում են, որ իբրեւ պաշտպանում են մեզ կամ փախստականի ինչ-որ վկայականներ են բաժանում՝ դարձեալ անունը դնելով, թէ պաշտպանում են: Բայց դա խորը քաղաքական հիմքեր ունի եւ դրա մեկնաբանութիւնները տարբեր են: Օրինակ, եթէ իրենք ընդունում են, որ մեր անձնագրերը ՀՀ անձնագրեր չեն, ուրեմն, ընդունում են, որ կայ Արցախի Հանրապետութիւն. ասել է թէ՝ իրենք ճանաչում են ԱՀ-ն:

Երկրորդ՝ եթէ չեն ընդունում ԱՀ անձնագրերը, որոնք ՀՀ-ն էր տուել եւ 30 տարի շարունակ այդ անձնագրերը հէնց պաշտպանւած լինելու նպատակ ունէին, քանի որ ԱՀ-ն ճանաչւած պետութիւն չէր, այդպիսով ՀՀ-ն պաշտպանել է ԱՀ քաղաքացիներին ու հիմա, եթէ իրենք չեն ընդունում այդ անձնագրերը եւ համարում են, որ մենք այլ պետութիւն ենք, ապա հարց է առաջանում՝ ինչպէ՞ս կարող էր մէկ պետութեան իշխանութիւնը կամ ղեկավարը, յանձնել մէկ այլ պետութիւնը:

Ելնելով այն քաոսից, որը իրենք ստեղծել են թէ՛ քաղաքական, թէ՛ սոցիալական առումներով, ԱՀ կառավարութիւնն ընդհանրապէս իրենց չէր կարող վնասել: Ի վերջոյ, իրենք ի լուր աշխարհի խօսում են բռնի տեղահանումների եւ սոցիալական աջակցութիւնների մասին, տարբեր երկրներից բաւականին շատ գումարներ են գալիս Հայաստան՝ այդ հարցերը լուծելու համար: Ինչպէ՞ս, օրինակ, իրենք կարող են բռնի տեղահանւածների սոցիալական հարցերով զբաղւել, եթէ չեն օգտագործում ԱՀ կառավարութեանը, որը որ՛ ամենաշատն է տեղեկացւած թէ՛ տեղակայման, թէ՛ մարդկանց սոցիալական վիճակի մասին: Բայց իրենք դա անում են առանց ԱՀ կառավարութեանը ներգրաւելու, զրոյից ու բաւականին շատ խնդիրներ են առաջանում. աւտոմատ աջակցութիւն է գնում, որի գնահատականը ես դեռ չեմ ցանկանում տալ, բայց դա պէտք է տրւի: Իսկ եթէ այդ աշխատանքն արւէր ԱՀ կառավարութեան աջակցութեամբ, աւելի էֆեկտիւ էր լինելու եւ ես վստահ եմ, որ այդ պարագայում, հազարաւոր ընտանիքներ, ուղղակի չէին լքի Հայաստանը: Ահա մէկ տարբերակ, թէ ինչպէ՞ս կարելի էր օգտագործել ներուժը եւ որը որեւէ անվտանգային խնդիր չէր առաջացնելու:

Այսինքն, մատուցման հարց է: Իրենք ներկայացնում են, որ մենք պէտք է լուծենք, կորցնենք մեր ինքնութիւնը, բարբառը, մշակոյթը, որպէսզի չվտանգե՞նք. սա կեղծ թեզ է: Ի դէպ, սրա հակառակն ասում է Ադրբեջանը, որ պատրաստ է ընդունել արցախցիներին՝ պահպանելով նրանց մշակոյթը, լեզուն եւ այլն: Ստացւում է, որ թշնամի պետութիւնն աւելի՞ հանդուրժող է, գոնէ քաղաքական հարթութիւնում՝ իր յայտարարութիւնների մակարդակում: Իհարկէ, սա էլ կեղծ թեզ է եւ մենք հասկանում ենք, որ դա ասւում է՝ ասելու համար: Ամէն դէպքում, այս ամենում կարելի է տեսնել ՀՀ եւ Ադրբեջանի իշխանութիւնների համագործակցութիւնը. մի կողմից վախի մթնոլորտ ստեղծելով, միւս կողմից Ադրբեջանի ականաջահաջոյ յայտարարութիւնները… արցախցիներից շատերն այսօր տրւում են այդ քաղցր յայտարարութիւններին ու Հայաստանի իշխանութիւնների կողմից ճընշումներն էլ նպաստում են նրան, որ շատերը յայտարարում են՝ պէտք է տեղափոխւել այլ երկիր, կամ, վերադառնալ Արցախ՝ ցանկացած պայմանով: Այնպէս որ, կարող է համատեղ աշխատանք լինի, որի արդիւնքում նման իրավիճակ է ստեղծւում:

-Սամուէլ Բաբայեանի կուսակցութիւնը՝ «Միասնական հայրենիքը» ներկայացնող, ԱՀ խորհրդարանի պատգամաւոր Մարսէլ Պետրոսեանն էր խօսել Արցախի վտարանդի կառավարութիւն ստեղծելու մասին, բայց նրա առաջարկը, կարծես արձագանգ չէր ստացել: Ինչո՞ւ:

-Ես ձեզնից լսեցի իր՝ նման կոչի մասին: Եթէ իրեն թւում է, թէ ես պէտք է իր «Ֆէյսբուք»-եան գրառումները կամ հարցազրոյցները ընդունեմ ի գիտութիւն եւ գործեմ, չարաչար սխալւում է: ԱՀ ԱԺ-ն աշխատում է, կայ, գոյութիւն ունի եւ համակարգողն էլ հէնց իրենց կուսակցութիւնից է, իրենք կարող են շատ հանգիստ դա կազմակերպել ու առաջարկել: Իրենց ոճը չի փոխւել. օդում ինչ-որ բաներ խօսել, յետոյ ասել, որ իրենց չլսեցին, իրենց ասածը չարեցին:

Երկրորդ, երբ հերթը դրան հասնի, մենք իհարկէ, աւելի մանրամասն կը խօսենք դրա մասին, բայց ես չեմ կարծում, որ Հայաստանում մենք վտարանդի կառավարութիւն ստեղծելու խնդիր ունենք: Մենք Հայաստանում ենք, մեր հայրենիքում ենք, ԱՀ նախագահի հրամանագրով կայ ԱՀ կառավարութիւնը, իսկ վտարանդի կառավարութիւն ստեղծելու պարագայում, կարծում եմ, պէտք է դիտարկւի այլ երկրում տեղակայման հարցը: Հայաստանում ազգային իշխանութեան գոյութեան պարագայում, ԱՀ կառավարութեան, ԱԺ-ի ընկալումը բոլորովին այլ կը լինէր: Բայց եթէ խնդիր կայ, ուրեմն պէտք է տեղակայման վայրի հարց լուծել, որտեղից էլ կը յայտարարւի ԱՀ վտարանդի կառավարութեան ստեղծման մասին: Սա, իհարկէ, շատ լուրջ քննարկման թեմա է եւ այժմ մենք դա անում ենք տարբեր մասնագէտների հետ եւ մօտ ժամանակներս տեսակէտ կը յայտնենք:

Զրոյցը՝
ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
«Aravot.am»

Հայաստանը գաղտնի հակառուսական նոր բանաձեւի՞ է միացել

Ես ուզում եմ հասկանալ ՀՀ իշխանութիւնները միացե՞լ են ուկրաինական «Խաղաղութեան բանաձեւ»-ին, որով պատրաստւում են Լահէի միջազգային դատարանում դատել ՌԴ նախագահին. այս մասին «Yerkir.am»-ի հետ զրոյցում ասաց քաղաքագէտ Բենիամին Մատթէոսեանը:

Հոկտեմբերի 27-ին ԱԽ քարտուղար Արմէն Գրիգորեանը մեկնել էր Մալթա, որտեղ Հայաստանն առաջին անգամ մասնակցում էր Ուկրաինայի առաջարկած «Խաղաղութեան բանաձեւ»-ի շուրջ քննարկումներին: Երկօրեայ համաժողովը կազմակերպւել է Կիեւի նախաձեռնութեամբ եւ ուկրաինական կողմը պահանջում է յատուկ տրիբունալ ստեղծել՝ Ռուսաստանի իշխանութիւններին դատելու համար:

Հայաստանի մասնակցութիւնը այդ համաժողովին լուրջ քննադատութեան արժանացաւ դաշնակից Ռուսաստանի կողմից: Մոսկւան «ցուցադրական հակառուսական ժեստ» որակեց Հայաստանի մասնակցութիւնը Մալթայի համաժողովին ու նշեց, որ Երեւանում պէտք է իրենց հաշիւ տան, որ ակտիւ սիրախաղ են անում նրանց հետ, ովքեր ագրեսիւ հակամարտութեան մէջ են Ռուսաստանի հետ»:

Բենիամին Մատթէոսեանը նկատում է, որ հայկական կողմը, երբ հաղորդագրութիւն էր տարածել այդ հանդիպման մասին, պարզապէս նշել էր, որ քննարկւել են հայ-ուկրաինական յարաբերութիւնները, մինչդեռ ուկրաինական կողմի հաղորդագրութիւնն այլ մանրամասներ էր պարունակում, որտեղ յատուկ ընդգծւած էր, որ Հայաստանը միացել է ուկրաինական «Խաղաղութեան բանաձեւ»-ին:

Կիեւի բերած «Խաղաղութեան բանաձեւ»-ը ենթադրում է յատուկ տրիբունալի ստեղծելում՝ Ռուսաստանի իշխանութիւններին դատելու համար:

Հայաստանի մասնակցութիւնը այդ համաժողովին լուրջ քննադատութեան արժանացաւ դաշնակից Ռուսաստանի կողմից: Մոսկւան «ցուցադրական հակառուսական ժեստ» որակեց Հայաստանի մասնակցութիւնը Մալթայի համաժողովին ու նշեց, որ Երեւանում պէտք է իրենց հաշիւ տան, որ ակտիւ սիրախաղ են անում նրանց հետ, ովքեր ագրեսիւ հակամարտութեան մէջ են Ռուսաստանի հետ»:

Բենիամին Մատթէոսեանը նկատում է, որ հայկական կողմը, երբ հաղորդագրութիւն էր տարածել այդ հանդիպման մասին, պարզապէս նշել էր, որ քննարկւել են հայ-ուկրաինական յարաբերութիւնները, մինչդեռ ուկրաինական կողմի հաղորդագրութիւնն այլ մանրամասներ էր պարունակում, որտեղ յատուկ ընդգծւած էր, որ Հայաստանը միացել է ուկրաինական «Խաղաղութեան բանաձեւ»-ին:

Կիեւի բերած «Խաղաղութեան բանաձեւ»-ը ենթադրում է յատուկ տրիբունալի ստեղծելում՝ Ռուսաստանի իշխանութիւններին դատելու համար:

Հայաստանի մասնակցութիւնը այդ համաժողովին լուրջ քննադատութեան արժանացաւ դաշնակից Ռուսաստանի կողմից: Մոսկւան «ցուցադրական հակառուսական ժեստ» որակեց Հայաստանի մասնակցութիւնը Մալթայի համաժողովին ու նշեց, որ Երեւանում պէտք է իրենց հաշիւ տան, որ ակտիւ սիրախաղ են անում նրանց հետ, ովքեր ագրեսիւ հակամարտութեան մէջ են Ռուսաստանի հետ»:

Բենիամին Մատթէոսեանը նկատում է, որ հայկական կողմը, երբ հաղորդագրութիւն էր տարածել այդ հանդիպման մասին, պարզապէս նշել էր, որ քննարկւել են հայ-ուկրաինական յարաբերութիւնները, մինչդեռ ուկրաինական կողմի հաղորդագրութիւնն այլ մանրամասներ էր պարունակում, որտեղ յատուկ ընդգծւած էր, որ Հայաստանը միացել է ուկրաինական «Խաղաղութեան բանաձեւ»-ին:

Կիեւի բերած «Խաղաղութեան բանաձեւ»-ը ենթադրում է յատուկ տրիբունալի ստեղծելում՝ Ռուսաստանի իշխանութիւններին դատելու համար:

Հայաստանի մասնակցութիւնը այդ համաժողովին լուրջ քննադատութեան արժանացաւ դաշնակից Ռուսաստանի կողմից: Մոսկւան «ցուցադրական հակառուսական ժեստ» որակեց Հայաստանի մասնակցութիւնը Մալթայի համաժողովին ու նշեց, որ Երեւանում պէտք է իրենց հաշիւ տան, որ ակտիւ սիրախաղ են անում նրանց հետ, ովքեր ագրեսիւ հակամարտութեան մէջ են Ռուսաստանի հետ»:

Բենիամին Մատթէոսեանը նկատում է, որ հայկական կողմը, երբ հաղորդագրութիւն էր տարածել այդ հանդիպման մասին, պարզապէս նշել էր, որ քննարկւել են հայ-ուկրաինական յարաբերութիւնները, մինչդեռ ուկրաինական կողմի հաղորդագրութիւնն այլ մանրամասներ էր պարունակում, որտեղ յատուկ ընդգծւած էր, որ Հայաստանը միացել է ուկրաինական «Խաղաղութեան բանաձեւ»-ին:

Կիեւի բերած «Խաղաղութեան բանաձեւ»-ը ենթադրում է յատուկ տրիբունալի ստեղծելում՝ Ռուսաստանի իշխանութիւններին դատելու համար:

Բենիամին Մատթէոսեանը անդրադառնալով Սիմոնեանի այս յայտարարութեանը նշում է՝ Ռուսաստանը միշտ փորձել է պահպանել ռազմավարական բալանսը, Հայաստանին նոյնիսկ անվճար զէնքեր է տրամադրել:

«ՀՀ իշխանութիւնները կարող են տարբեր երեւոյթների մասին տարբեր գնահատականներ տալ, մանիպուլացիաներ իրականացնել, բայց այն քաղաքականութիւնը, որը վարում է Փաշինեանի կառավարութիւնը, մեզ թշնամացնելու է Ռուսաստանի հետ»,- ասաց քաղաքագէտն ու հարց ուղղեց՝ ո՞վ է աւելի շատ տուժելու հայ-ռուսական թշնամանքից:

«Ենթադրենք Հայաստանը լիարժէք դուրս է գալիս ռուսական ազդեցութեան գօտուց ու մտնում թուրքական ազդեցութեան գօտի, քանի որ արեւմուտքն այստեղ մտնելու հնարաւորութիւն չունի, ո՞վ է դրանից տուժելու: Ռուսաստանը, եթէ այս տարածաշրջանում պարտւի, ընդամէնը դիրքեր է կորցնելու, եթէ մենք հանենք ՌԴ-ին այստեղից ու մտնենք թուրքական ազդեցութեան գօտի, պարզապէս կոչնչանանք»,- ասաց Բենիամին Մատթէոսեանը:

Ալէն Սիմոնեանը յայտարարեց, թէ Ռուսաստանը ցանկանում է, որ Հայաստանը մշտապէս գոյաբանական կախւածութիւն ունենայ իրենցից:

Քաղաքագէտը այս յայտարարութիւնը մանիպուլիացիա է համարում ու յիշեցնում, որ այդ նոյն իշխանութիւնները յայտարարում էին, թէ զէնք չենք կարողանում բերել այլ տեղերից, որովհետեւ ՀԱՊԿ անդամ ենք եւ դա մեզ խանգարում է:

«Մենք Ֆրանսիայի հետ զէնք ստանալու հետ կապւած պայմանագիր կնքեցինք, ՀԱՊԿ-ից բացասական արձագանգ եղե՞լ է, կամ Հայաստանին հեռացրե՞լ են կառոյցից, ոչ»,-ընդգծում է քաղաքագէտը:

Քաղաքագէտը նաեւ յիշեցրեց, որ նախկին ղեկավարների օրօք Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ համագործակցութեան բազմաթիւ ծրագրեր է ունեցել, նոյնիսկ մեր ԶՈՒ զինատեսակները արդիականացրել ենք ՆԱՏՕ-ի մեր գործընկերների շնորհիւ, սակայն Ռուսաստանը երբեք չի միջամըտել ու կոշտ արձագանգ չի հնչեցրել:

Հայ-ռուսական յարաբերութիւնները փչացնելով, կամ թշնամանքի հասցնել ո՞ւմ պատւէրն են կատարում օրւայ իշխանութիւնները՝ բարդ չէ ենթադրել:

Արեւելից

ԳՐԻՇ ԴԱՒԹԵԱՆ



Սիս ու Մասիսից մինչ Փայտակարան,
Ուտիք ու Արցախ ու Վասպուրական,
Պարսկահայք, Գուգարք, Այրարատ ու Մոկք,
Տուրուբերան, Տայք, Տարօն, Սիւնիք, Ծոփք,
Աղձնիք, Բարձր Հայք,
Կորճայք, Փոքր Հայք,
Աշխարհքն են հայոց վառ արեւի տակ,
Կողոպտուած, աւաղ, կործան, յափշտակ...

Բայց հուրը վառ է դեռ բագինների,
Ու վերակնքուած խաչով վերների,
Որ կը շէնանան ոգով հայկական,
Արեամբ հայորդեաց սուրբ արմենական։

Օրհնուած ենք մենք ու մեր հայրենին,
Թէեւ դժխեմ է եղել մեր ուղին,
Դեռ միջնադարից մինչեւ օրերս
Բայց շուռ ենք տուել այդ մութ էջերը,
Ճամբայ ենք բացել առ լոյս մեծուղի,
Դէպի լուսաւոր կեանքը գալիքի,
Մեր հայրենիքում, որ պիտի կոփենք
Անխաբ նուիրմամբ ու բարեփոխենք։

Ար) ազգն ենք ու Ար երկիրը հայոց,*
Ու քանդակել ենք Ար լեռը հայոց,
Որի ուսից է ելնում արեւը,
Աշխարհին ձօնում կեանքի բարեւը.
Արեւն այստեղ է ծագել մշտական,
Լուսել աշխարհքը առաջին անգամ,
Ու փարատել է մութը հոգեկան.
Պատահել էլ է
Մթար է իջել,
Բայց ասուպներով խաւարը շեղբել,
Աստղունք ենք վառել կապոյտ գմբէթում,
Կեանք լուսաւորել ծաղկող եզերքում.
Իսկ արիւնարբու, խաւարուտ խեղեր
Ինչ էլ ճգմել են շողը գլխատել,
Սատակել են հէնց իւրեանց դանակից,
Մինչեւ կոկորդը խրուած թունալից։

Թքած թուրք, օսման
Նորից ելել են ջերմած օձի պէս,
Պոչ են խշշացնում գուբում խորքերի,
Նրանց բաղձանքը դարն է պժգալի,
Նրանց խոհաշխարհն՝ մի մեռած մատեան,
Նրանք տենչում են մութը գուժալի,
Խաւարտչին թշւառ ու եղերական։

Նրանց չի թովում կեանքի խոյանքը,
Նրանք տեւում են քառսում խռիւ,
Ապագայ կերտող վեհ երազանքը
*Թւում է նրանց կոշմար)** ահռելի։*

Այդպէս են ուզում,
Հաւատում դրան,
Մոլեռանդ իրենց կուտապ չաշխարհում...

Բայց եղերական գուցէ չլինէր,
Ու լինէր գուցէ կարեկցել նրանց...
Բայց... զարզանդ...

Նրանք մաղթում են դաժան
Իրենց դժխեմը՝
Բոլորիս համայն...

Ահա թէ ինչու մենք ո՛չ ենք ասում
Արնոտ մահիկին,
Եւ մեկնում ենք մեր ձեռքը անտարտամ
Նիրհող դաշոյնին,
Որ շեղբը շողա՛յ,
Փարատի մութը,
Պատռի սեւ ամպի ժահոտ մռութը,
Փշրի արիւնոտ մահիկի ռունկը,
Ճոթի իժութեան հաստացած բուգը,
Ու կախի երկնում արեւի գունդը...

Ար արեւելքին դա՛ է սազական,
Արեւն այստեղ է ծագել մշտական։

Ու Աստուած, ով աշխարհք, ով բնութիւն։

**) Արիական*
***) Մղձաւանջ, քաոս*

Մանկութեան փողոց

Մի անգամ, պատահաբար
Ես վերադարձայ
Իմ մանկութեան փողոցը.
Այնտեղ, ուր խաղացել էի
Իմ անհոգութեան այն բոլոր խաղերը,
Որոնցով սովորել էի
Հասունութեան կեանքս ապրելու։

Հողէ մայթերով ու հողէ պատերով,
Այն փողոցը,
Որի մէջտեղով առուակն էր հոսում
Գարնան կարկաչով,
Ամռան ցամաքումով,
Աշնան պղտորումով,
Ձմռան սառչումով։

Ի՜նչ եմ տեսնում...

Իմ մանկութեան բոլոր խաղերը
Իրար շուրջ հաւաքուած
Ընկերական վաղեմի մտերմութեամբ
Զրուցում են իրար հետ։

Նրանք լոյսի նշոյլներ էին,
Ստուերի նշոյլներ էին,
Եւ այնպիսի նշոյլներ էին,
Որ չգիտէի ինչի նշոյլներ են։

Նրանք զրուցում էին նշուլային խօսքերով,
Ճաճանչող, կամ մթին, կամ անորոշ,
Զեւաբանական բոլոր համադրոյթներով,
Որ օրինապահութեան,
Քաղաքավարութեան
Եւ շնորհքինութեան
Երեւոյթներով էին օժտուած.
Մտերիմ,
Վաղեմի
Ու ընկերական։

Մանկութեան կրակոտ ցանկութեամբ
Միանգամից ներս ընկայ
Բոլորին հանդիպելու,
Իւրաքանչիւրի հետ խաղալու
Մանկութ օրերի անմիջականութեամբ...

Բայց երեւի դա շատ էր անակնկալ,
Այդպէ՜ս միանգամի՜ց, աննախադէպ...

Նրանք մի պահ տարտամեցին,
Որ, մեղմ ասած, կոպիտ էր իմ հանդէպ։

Ապա... իւրաքանչիւրը իւրովի
Զսպելով իրեն,
Զգաստացան օրինապահ ու նրբանկատ,
Որ իբր թէ դիտաւորեալ չէր,
Որ արդէն վերջացրել էին,
Ուզում էին գնալ...

Ելան իրենց նշուլային արտացոլումներով,
Այնպէս, ի միջի այլոց որպէս,
Որ ես էլ չվիրաւորւեմ,
Ու հեռացան
Իմ մանկութեան փողոցից...

Մանկութեանս փողոցն էր, որ հեռացաւ...

Ես էի, որ մտովի,
Ժամանակի հեռաւորութիւնից
Կանգնել էի այնտեղ,
Մէն-մենակ.
Ախր էլ մանուկ չէի,
Ախր ընկերներս էլ իմ հետ չէին։

Միւս անգամ, երեւի,
Այդպէս անակնկալ ներս չընկնեմ։

Սիրոյ մասին

ՀԱՅԿ ՍԱՐԵԱՆ

Երբ քեզ այն անգամ տեսայ ես հեռից,
Սիրտս դիւթեցիր քո պարզ ժպիտով,
Քո դէմքդ ինչպէս՝ մի քնքուշ ծաղկից,
Աւելի չքնաղ գծուեց իմ սրտով։

Դու ինձ համար միշտ՝ դարձար պաշտելի,
Առանց քեզ չունեմ՝ շունչ, հոգի ու կեանք,
Պէտք է դու ընդմիշտ դառնաս իմ կողքին,
Որ ստանամ ես քեզանով մեծ փառք։

Այն պահից, որ ես քեզ հանդիպեցի,
Դարձար դու կեանքիս ամբողջ իմաստը,
Դու սրտիս համար եղար թագուհի,
Ու գիշերուայ իմ բողբոջ երազը։

Իմ կեանքի երազ, իմ երջանկութիւն,
Դու լուսինի պէս լոյս տիր հոգուս,
Դառնանք միասին մէկ յաւերժութիւն,
Ու լինենք փարուած միշտ իրար կողքի։

Քաջ արցախցի

Բանտարկում յաճախ յանցագործ մարդկանց
Ու պահում նրանց կալանքի ներքոյ,
Զրկւում են նրանք ազատ ապրելուց
Ու կրում պատիժ՝ իրենց մեղքերի։
Բայց ո՞վ է տեսել ազատ ժողովուրդ
Ու ազատ երկիր, որ ունի անցեալ
Ու վաղանջական հսկայ պատմութիւն,
Բանտարկւի անխիղճ ու կրի պատիժ,
Անգամ չգործած մեղքերի համար։

Բայց տեսանք այսօր՝ վսեմ ժողովուրդ,
Որ ապրում էր նա ազատ-անկաշկանդ,
Հողերում իր սուրբ.
Բանտարկան նրան՝ վայրենի-քոչւոր,
Ազերի ու թուրք կոչեցեալները։

Այդ բիրտ ու անկիրթ՝
Դարաւոր անխիղճ՝ ոտխն հայի,
Չգիտէր համակ՝ կանոնն աշխարհի,
Նա չէր կարդացել մարդկութեան մասին
Ու արդարութեան։
Նա չէր հանդուրժում, որ տեսնել հայը՝
Թէկո՛ւզ ապրում է՛, թէկո՛ւզ շնչում է...
Նա ուզում էր, որ հային դարձնել ստրուկ ու գերի,
Հային ջախջախել,
Նրան սպանդել՝
Ոգով ու սրտով, ամբողջ մարմնով։
Այդ չար գիշատիչ Թուրքը գարշելի,
Պաշարեց ամբողջ լեռները հայոց Արցախ աշխարհի
Ու իր նաւթերի ու հարստութեամբ,
Կաշառեց ամբողջ տմարդ աշխարհին
Ու հային զրկեց ապրել հարազատ,
Պապենական իր՝ սրբազան երկրում։

Պատիժ չկրած՝ ջարդարարները,
Յախուռն դարձած չար արարքներից,
Զաւթեցին էլի հայոց հողերը,
Ու բռնի վերցրին Արցախ աշխարհը,
Անտուն դարձնելով հազարաւոր մեր՝
Խեղճ հայոց ազգին։

Տարագրուած մեր անյոյս-հատուած,
Արցախցին այսօր, պէտք է իմանայ,
Հայութեան սրտում, անվեհեր քաջ է.
Նա կուեց հզօր՝ մենակ ու անտէր,
Գերիշխան ու մեծ երկրների դէմ։
Արցախցին այսօր պէտք է իմանայ,
Որ նրանք երբէ՛ք չեն պարտուելու ու չեն պարտուել։

Թէկո՛ւզ, որ թուրքն՝ անպատկառ-անխիղճ,
Խլեց մեզանից՝
Արծւաբոյն մեր հայոց Արցախը,
Բայց թող իմանայ չի կարող բնաւ,
Խլել մեզանից ոգին Արցախի,
Նա միշտ կապրի ու ապրելու է՝
Հայ ազգի սրտում։
Իսպառ հեռու չէ, այն օրը նորից,
Արցախցին կրկին, անկոտրում կամքով,
Ծածանելու է դրօշը հայոց,
Արցախ աշխարհում։

Հոկտ. 2023
Նոր Ձուղա

ԱՅԼԱՌԱՆ

NIA.

12%-ով կալորիաների սահմանափակումը նւազեցնում է բորբոքումն ու դանդաղեցնում ծերացումը

Կալորիաների ընդունումը նոյնիսկ 12%-ով սահմանափակելը կարող է բարելաւել առողջ ծերացման ձեր հնարաւորութիւնները՝ բորբոքումը նւազեցնելու հաշւին: Այս մասին աւում է Ծերացման ազգային ինստիտուտի (NIA) գիտնականների ուսումնասիրութեան մէջ, որը հրապարակւել է «Aging Cell» ամսագրում:

Բազմաթիւ հետազօտութիւններ ցոյց են տւել, որ կենդանիների մօտ կալորիաների սահմանափակումը՝ առանց օրգանիզմը զրկելու էական վիտամիններից եւ հանքանիւթերից, դանդաղեցնում է տարիքային հիւանդութիւնների զարգացումը, երկարացնում է կեանքը, բարելաւում է դրա որակը եւ ստրեսին դիմադրողականութիւնը: Նոր հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ այս ազդեցութիւնը տարածւում է նաեւ մարդկանց վրայ:

Գիտնականները վերլուծել են CALERIE ուսումնասիրութեան հիւանդների տւեալները: Այն ներառում էր առողջ երիտասարդ եւ միջին տարիքի ամերիկացիներ՝ առանց գիրութեան: Նրանց խնդրել են երկու տարւայ ընթացքում նւազեցնել օրական կալորիների ընդունումը 25%-ով: Սակայն 12%-ով կրճատումն առաւելագոյնն էր, որին հնարաւոր էր եղել հասնել:

Հետազօտողները պարզել են, որ կալորիաների այս փոքր սահմանափակումը մարդկանց վրայ նոյն ազդեցութիւնն է թողել, ինչ կենդանիների վրայ: Օրինակ՝ այն ակտիւացրել է էներգիայի արտադրութեան եւ նիւթափոխանակութեան համար պատասխանատու գէները՝ միաժամանակ ճնշելով պրոբորբքային գէները: Փոխւել է նաեւ ցիրկադային ռիթմերի կարգաւորումը եւ վնասւած ԴՆԹ-ի հատւածների վերականգնումը:

Քանի որ բորբոքումն ու ծերացումը սերտօրէն փոխկապակցւած են, կալորիաների սահմանափակումը հզօր մօտեցում է կանխելու բորբոքային վիճակը, որը զարգանում է շատ տարեց մարդկանց մօտ: Կալորիաների ընդունման 12%-ով կրճատումը հնարաւոր է եւ կարող է շատ օգտակար լինել, եզրակացրել են հեղինակները:

Բացի այդ, սկզբնական Phase 2 CALERIE հետազօտութեան հեղինակները, որի արդիւնքները հրապարակւել են «Nature Aging» ամսագրում, ցոյց են տւել, որ կալորիաների սահմանափակումը դանդաղեցնում է ծերացման տեմպերը 2-3%-ով: Բացի այդ, փորձի մասնակիցները կորցրել են իրենց մարմնի քաշի միջինը 10%-ը եւ յաջորդ երկու տարւայ ընթացքում գրեթէ քաշ չեն աւելացրել:

«DailyMail».

Կանանց գլխի կաթւածի ախտանշանները դժւար է նկատել

Վիրաբոյժ Էրին Նենսը Նիւ Եօրքի Լենոքս Հիլ հիւանդանոցից բացատրել է, թէ որոնք են գլխի կաթւածին բնորոշ ախտանիշերը, ինչպիսին են մարմնի մէկ կողմի կաթւածը եւ անհասկանալի խօսքը, կանանց մօտ կարող են չնկատւել: Արժէ ուշադրութիւն դարձնել այնպիսի նշանների վրայ, ինչպիսին են սրտխառնոցը, ստամոքսի խանգարումը եւ շնչարգելութիւնը,- տեղեկացրել է «DailyMail»-ը:

Բժիշկը նշել է, որ ԱՄՆ-ում սրտի կաթւածից մահացու ելքերի 60 տոկոսը բաժին է ընկնում կանանց: Ամենայն հաւանականութեամբ դա կապւած է այն բանի հետ, որ այդ վիճակի նշանները տղամարդկանց եւ կանանց մօտ տարբեր են: Դասական ախտանիշերը, ինչպիսին են մարմնի մէկ կողմի կաթւածը, անհասկանալի խօսքը եւ դէմքի ասիմետրիան, աւելի յաճախ հանդիպում են տղամարդկանց մօտ: Որոշ դէպքերում բժիշկները չեն կարողանում պարզել ուղեղի կաթւածը եւ սխալմամբ կին պացիենտների մօտ ախտորոշում են միգրեն:

Կանայք կարող են ունենալ գիտակցութեան խառնափնթորութիւն կամ ապակողմնորոշում, գլխացաւ եւ թուլութիւն: Տագնապալի ախտանիշեր են նաեւ սրտխառնոցը, ուշաթափութիւնները եւ ջղակծկումները:

Նենսն աւելացրել է, որ գլխի կաթւածը կարող է ի յայտ գալ տարբեր ձեւերով՝ դէպի ուղեղ տանող արիւնատար անօթների չափի տարբերութիւնների հետեւանքով: Ուղեղի այն մասերը, որոնք ախտահարում է ուղեղի կաթւածը, նոյնպէս կարող են տարբեր լինել տղամարդկանց եւ կանանց մօտ:

10 մթերքներ նպաստում են իմունիտետի պահպանմանը

Սննդաբան Մեգի Միխալչիկը, յրում կատարելով գիտական հետազօտութիւններին, նշել է տասը մթերքներ, որոնք նպաստում են իմունիտետի պահպանմանն աշնանը: Մթերքների ցուցակը հրապարակել է Huffpost պորտալը:

Դրանց մէջ են դդումը, մեղրը, ծաղկակաղամբը, բրիւսելեան կաղամբը, դդումը, խնձորը, տանձը, լոռամրգին, ինչպէս նաեւ քրքումը եւ մուսկատի ընկոյզը: Այս բոլոր մթերքները հարուստ են C, B եւ A վիտամիններով, հակաօքսիդանտներով, հանքանիւթերով եւ ֆլաւոնոիդներով: Դրանք ճնշում են բորբոքումն օրգանիզմում եւ նպաստում իմունիտետի ամրացմանը:

Օրինակ, մէկ բաժակ դդումը պարունակում է A վիտամինի օրական պահանջմունքի մօտ 200 տոկոսը, իսկ մեղրը բնական միջոց է հազի դէմ: Խնձորը եւ տանձը բջջանիւթի եւ C վիտամինի հիանալի աղբիւր են՝ ի յաւելումն կալիումի, K վիտամինի, մանգանի եւ B խմբի տարբեր վիտամինների:

Մասնագէտը նշել է, որ այդ մթերքները կարելի է օգտագործել ամէն օր՝ աշնանը հիւանդութիւնների կանխարգելման համար:

Անւանւել է քրոնիկական յոգնածութեան եւ թուլութեան ոչ ակնյայտ պատճառ

Բժիշկ Ռէյչէլ Վորդը եւ սննդաբան Լուիզ Փայնը նշում են, որ քրոնիկական յոգնածութեան եւ էներգիայի պակասի անյայտ պատճառներից մէկը վիտամին B12-ի պակասն է: Նրանց կարծիքը հրապարակել է «The Sun»-ը:

Վորդը նշել է, որ վիտամին B12-ն անհրաժեշտ է արեան կարմիր բջիջների եւ նեարդային բջիջների արտադրութեան համար, ինչպէս նաեւ մասնակցում է իմունային համակարգի աշխատանքին:

«Դեֆիցիտը յանգեցնում է նեարդաբանական ախտանիշերի, ինչպիսիք են՝ թմրութիւնը, անհաւասարակշռութիւնը, քնկոտութիւնը, շփոթածութիւնը, ցրւածութիւնը»,– ըստ «shantnews»-ի՝ ասել է նա:

Վորդի խօսքով, մարդիկ, ովքեր B12-ի պակաս ունեն, յաճախ դժգոհում են յոգնածութիւնից եւ թուլութիւնից: Դա պայմանաւորւած է արեան կարմիր բջիջների պակասով, որոնք թթւածին են տեղափոխում ամբողջ մարմնով:

«Wiley».

«Օրգանիզմում B12 վիտամինի պակասը կապւած է սրտի եւ անօթների հիւանդութիւնների հետ»

Բարսելոնայի համալսարանի գիտնականները պարզել են, որ B12 վիտամինի պակասը կապւած է սիրտ-անօթային հիւանդութիւնների եւ դիաբետի առաջացման բարձր հաւանակութեան հետ: Հետազօտութեան արդիւնքները հրապարակւել են «Wiley Online Library»-ում:

B12 վիտամինը կարեւորագոյն նշանակութիւն ունի մարդու առողջութեան համար: Դրա անբաւարարութիւնը կարող է դիաբետի, սրտի եւ անօթների հիւանդութիւնների առաջացման պատճառ դառնալ: Գիտնականները պարզել են, որ այդ վիճակները կապւած են օրգանիզմում բորբոքման մարկերների բարձրացման հետ: Բորբոքման մարկերները նիւթեր են, որոնք ունեն որոշակի կենսաբանական ակտիւութիւն, որը ինդիկատոր է ծառայում ֆիզիոլոգիական կամ պաթոլոգիական պրոցեսի համար:

Հետազօտողները նաեւ յայտնաբերել են, որ որքան մարդու օրգանիզմում շատ է այդ վիտամինը, այնքան աւելի ցածր են նրա բորբոքման մարկերները: Դա նշանակում է, որ B12-ը կարող է պաշտպանական ազդեցութիւն ունենալ՝ կանխելով դիաբետի եւ սիրտ-անօթային հիւանդութիւնների առաջացումը:

Յայտնի է, որ B12 վիտամինի խտութիւնը մարդու օրգանիզմում նւազում է տարիքի հետ: Մկների վրայ կատարւած հետազօտութիւնը ցոյց է տւել, որ կրծողների մօտ այդ վիտամինի մակարդակը մնում է կայուն ամբողջ կեանքի ընթացքում: Գիտնականները ենթադրում են, որ մկների ուսումնասիրութիւնը թոյլ կը տայ ստեղծել արդիւնաւէտ ռազմավարութիւններ B12-ի անբաւարարութիւնը տարեց մարդկանց մօտ կանխելու համար: Հետազօտողները նախատեսում են նաեւ պարզել, թէ արդեօք արդիւնաւէտ են B12-ի յաւելումները տարբեր հիւանդութիւնների թերապիայի ժամանակ:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀԱՅ ԱԿՈՒՄԲ
ARMENIAN CLUB

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Նայիրի եւ Նորայր Արամեաններին, Թովմասեան ընտանիքի անդամներին ու բարեկամներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՎԱՐԴԳԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ

ցաւալի մահուան կապակցութեամբ:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ (ՀԱՅ ԱԿՈՒՄԲ) ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Նայիրի եւ Նորայր Արամեաններին, Արամեան եւ Թովմասեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՎԱՐԴԳԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԹԵԼԼՕ ԵՒ ԼԵՒՈՆ ԱՌԱՔԵԼԵԱՆՆԵՐ, ԱՆԳԻՆԷ ԵՒ ՋՕՐԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՆԵՐ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու իմ խորազգաց ցաւակցութիւնն եմ յայտնում՝ Նայիրի եւ Նորայր Արամեաններին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

ՎԱՐԴԳԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԱՐԱՔՍԻ ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Նայիրի եւ Նորայր Արամեաններին, Թովմասեան ընտանիքի անդամներին ու բարեկամներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՎԱՐԴԳԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՌՈԲԵՐՏ ԲԵԳԼԱՐԵԱՆ ԵՒ ՔԱՐՄԷՆ ԲԵԳԼԱՐԵԱՆ

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Թիլիմեան ընտանիքը իրենց շատ սիրելի եւ թանկագին մօրաքրոջ որդու՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՈՐՋԵԱՆԻ

անմոռաց յիշատակին 150 դոլար նուիրել են Մարմնա-մտային խանգարումներով հայ երեխաներին օժանդակող «Ակունք» կենտրոնին:

Գումարը յանձնուել է:

چشم‌انداز: جهانی بدون ترس از بیماری سرطان
ماموریت: برانگیختن امید به زندگی و حمایت از بیماران مبتلا به سرطان بدون محدودیت سن، ملیت، مذهب، جنسیت، نوع و مرحله بیماری سرطان و مشارکت در برنامه جامع ملی کنترل سرطان
موسسه خیریه بهنام دهش پور حمایت از بیماران مبتلا به سرطان
Behnam Dehshpour Charity Organization
behnamcharity.org.ir
behnamcharity
خدایا تو بر کار خیرم بدار
باهم مهربانی را کامل کنیم.
*۷۳۳*۷*۱۸#

ԱԼԻՔ
Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

آگهی استخدام
شرکت آوانداد
به یک نفر کارشناس حسابداری فروش
نیازمند است.
ارسال رزومه به آدرس ایمیل:
HR@avandad.com
شماره تماس: ۵۷۴۳۶ داخلی ۴۰۸

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է
www.alikonline.ir

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir
دفتر مرکزی
تهران، میدان آزادی، پایانه غرب، شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4
نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک، انتهای خیابان گلستان، خیابان گلشن دوست (مسیل باختر)، نبش خیابان طوروسیان (84)، پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77281288 • 021-77821769 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity
دفتر ایروان
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237
Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով
دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարւայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

آژانس مسافرتی
هفت ستاره آسمان آفتابی
7 STARS
هواپیمایی قشم
Qeshm Air
هواپیمایی ایران ایرتور
IRAN AIRTOUR AIRLINES
VARESH AIRLINES
هواپیمایی وارش
Armenia airways
7setaretours
خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی:
✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում
✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان
09303810625 WhatsApp tel: 021-88796742-3

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
هواپیمایی قشم
Qeshm Air
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

«Իրանի....

(Շար. 1-ին էջից)

է. «Իրանի միջուկային խաղաղասիրական ծրագրի հարցով փաստերը չպէտք է խեղաթիւրեն կամ ընտրովի ձեւով ներկայացնեն»:

ԻՌՆԱ-ի համաձայն՝ Իրաւանին նշել է. «Մտահոգիչ է, որ որոշ երկրներ, զարգացող երկրներին զրկում են միջուկային տեխնոլոգիաներին հասանելիութիւնից, խախտում են Ատոմական էներգիայի միջազգային գործակալութեան եւ «NPT»-ի կանոնները, մինչ ոմանք, առատաձեռնօրէն աջակցում են Իսրայէլի ռեժիմին, նոյնիսկ զանգւածային ոչնչացման զէնքի գաղտնի զինանոցներ ունենալով: Միակողմանի հարկադրական միջոցները եւ երկակի չափանիշերը փսաւում են միջուկային էներգիայի խաղաղ օգտագործմանը եւ տեխնիկական համագործակցութեանը»:

Իր ելոյթի այլ բաժնում, Իրանի մշտական ներկայացուցիչը անդրադառնալով սիոնիստական ռեժիմի ռճրագործութիւններին յստակեցրել է. «Իսրայէլի ռեժիմը հրաժարւել է միանալ «NPT»-ին եւ հաւատարիմ մնալ գործակալութեան համապարփակ երաշխիքներին: Ատոմային գործակալութիւնն այս ռեժիմի նկատմամբ պէտք է անկողմնակալ եւ արհեստավարժ մօտեցում դրսեւորի: Ահաւասիկ պահն է, զինաթափել այս ռեժիմին եւ խաղաղութիւն ու անվտանգութիւն հաստատել տարածաշրջանում»:

Ադրբեջանի....

(Շար. 1-ին էջից)

կոնտեքստում:

Երկրորդ արձանագրումս այն է, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան ճանաչումը չի լիազօրում Բաքուին կատարել ցեղասպանական գործողութիւններ, տարածքը մաքրել բնիկներից եւ այլն»:

Ըստ Գէորգ Ղուկասեանի՝ Ադրբեջանը շարունակ այն քաղաքական գիծն է վարում, որ դարաբաղեան հիմնախնդիր չկայ: Իսկ մեր դիտարկմանը, որ Հայաստանի իշխանութիւնների դիրքորոշումները յաճախ ադրբեջանաթուրքական լաբբիստները, պաշտօնեաները որպէս խաղաքարտ են օգտագործում, արդեօք չի դժւարացնո՞ւմ դրսում Հայ Դատի յանձնախմբերի աշխատանքը՝ նրանց հակազդելիս, մեր զրուցակիցն ասաց, որ Հայաստանի իշխանութիւնների անմիտ յայտարարութիւնները խոչընդոտում են Հայ Դատի գործունէութիւնը՝ ադրբեջանաթուրքական լաբբինգին հակազդելիս:

«2020 թ.-ից յետոյ ստեղծւել է այլ վիճակ եւ Հայ Դատը մարտավարական վերանայումների ընթացքի մէջ է»-,նշում է ՀՅԴ Հայ Դատի Կենտրոնական գրասենեակի յատուկ ծրագրերի պատասխանատուն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց **յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,** բացի **մահազդերից,** որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

IRAN AIRTOUR AIRLINES — Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Հայաստան» խմբակցութեան անդամները հանդիպել են ԵԽԽՎ մոնիտորինգի յանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողների հետ

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Սէյրան Օհանեանը, խմբակցութեան պատգամաւորներ՝ Արթուր Խաչատրեանը, Աննա Գրիգորեանն ու Էլինար Վարդանեանը նոյեմբերի 6-ին հանդիպել են ԵԽԽՎ մոնիտորինգի յանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմօ Կիլլունենի եւ Բորիանա Աբերգի հետ:

Խմբակցութեան պատգամաւորներն արժեւորել են համազեկուցողների՝ ԵԽԽՎ-ում հայանպաստ գործունէութիւնը, շեշտադրել Ադրբեջանի իշխանութիւնների կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացրած ցեղասպանութեան եւ հայրենազրկման, Հայաստանի Հանրապետութեան տարածքում ադրբեջանական զաւթիչ ուժերի առկայութեան միջազգային յանցագործութեան փաստերը: Պատգամաւորները կարեւորել են միջազգային հանրութեան կողմից Ադրբեջանի գործողութիւնների դատապարտումս ու հետեւանքների վերացման հրատապութիւնը, արձանագրել, որ դրանք դեռեւս բաւարար չեն:

Հիւրերի խնդրանքով պատգամաւորները ներկայացրել են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան քաղաքական կարգաւորման վերաբերեալ իրենց մօտեցումները: Մասնաւորապէս, նշւել է, որ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի տարածքի բռնազաւթումը եւ բնիկ հայ ազգաբնակչութեան էթնիկ զտումը որեւէ կերպ չեն կարող դիտւել որպէս հակամարտութեան վերջնական լուծում: Հակամարտութիւնը կարող է կարգաւորւել այլ հանրայայտ սկզբունքների հիման վրայ՝ ԷՂ ժողովրդի ազատ ինքնորոշման իրաւունքը յարգելու եւ իրացնելու դէպքում: Որպէս առաջին քայլ՝ անհրաժեշտ է համարւել ապահովել ԷՂ մեր հայրենակիցների վերադարձը հայրենիք. վերադարձի նախապայմանները ներառում են Լեռնային Ղարաբաղին անցումային (ժամանակաւոր) կարգավիճակի շնորհումը, անվտանգութեան երաշխիքների, այդ թւում՝ միջազգային խաղաղապահ ուժերի ներկայութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի հետ անխափան ու անվտանգ հաղորդակցութեան ապահովումը:

«Հայաստան» խմբակցութեան անդամները համազեկուցողներին ներկայացրել են նաեւ Հայաստանում քաղաքական հետապնդումների, ժողովրդավարութեան ոտնահարման, մարդու իրաւունքների խախտման դէպքերը, յատկապէս անդրադառնալով, իրենց կարծիքով, քաղաքական ընդդիմադիրների նկատմամբ շինծու քրէական գործեր յարուցելուն, դատարանների կողմից կալանքը որպէս պատիժ կիրառելուն, փաստաբանների առջեւ յարուցած արգելքներին, հաւաքների, խօսքի եւ մամուլի ազատութիւնը սահմանափակելու դէպքերին, անկախ եւ ինքնավար պետական մարմինները քաղաքականացնելուն եւ իշխանութիւնների կողմից դրանք իւրացնելուն, ինչպէս նաեւ երկրում միահեծան կառավարում հաստատելու փորձերին, Սահմանադրութեամբ խորհրդարանական ընդդիմութեանը վերապահւած իրաւունքներն անտեսելուն: Կարեւորելով Հայաստանի դատաւորների միութեան, փաստաբանների պալատի եւ ժուռնալիստների միութեան հետ աշխատանքը՝ հիւրերին ներկայացւել է նշւած հարցերի վերաբերեալ ամփոփ թղթածրար:

«Arfd.am»

SET Coffee
فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

املاک هنرمندان
تاسیس ۱۳۸۸
املاک هنرمندان
بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران منطقه ۶
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ –۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

Չէ Գեւարայի դուստրն արաբական աշխարհին եւ պաղեստինցիներին կոչ է արել պայքարել Իսրայէլի դէմ

Լեգենդար յեղափոխական Չէ Գեւարայի դուստրը՝ Ալէյդա Գեւարան, արաբական աշխարհին եւ պաղեստինցիներին կոչ է արել պայքարել Իսրայէլի դէմ: Գրում է «EurAsia Daily»-ն:

Նա յիշեցրել է 1936-1939 թւականների Իսպանիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ ֆաշիստների դէմ իսպանացի մարտիկների կարգախօսը, որն օգտագործում էին նաեւ կուբացի յեղափոխականները՝ Ֆիդել Կաստրոյի գլխաւորութեամբ. «Հայրենի՛ք, կամ մա՛հ» (Patria o muerte!):

Բացի այդ, նա ամօթանք է տւել արաբական աշխարհի առաջնորդներին սեփական «արիւնակից եղբայրների» հանդէպ անգործութեան համար: Գեւարան արաբ առաջնորդներին կոչ է արել աւելի ակտիւ դիրքորոշում ցուցաբերել եւ օգնել պաղեստինցիներին:

«Արաբական աշխարհի ժողովուրդներ, ինչի՞ էք սպասում: Այն, ինչ այսօր կատարւում է Գազայի, Պաղեստինի հետ, բայց վաղը ո՞ւմ հետ է դա տեղի ունենալու: Եթէ թոյլ տաք Իսրայէլին շարունակել անել այն, ինչ ուզում է, ո՞ւր կը գնայ այդ ամէնը: Որտե՞ղ է այն կանգնում: Դուք նոյնիսկ մտածում էք այդ մասին: Դուք պէտք է միասնական լինէք որպէս ժողովուրդ: Դուք պաշտպանում էք ձեր արիւնը, ձեր մշակոյթը, ձեր կեանքը: Դուք երբեք չպէտք է մոռանաք սա:

«Tert.am»

«Սիւնիքում....

(Շար. 1-ին էջից)

ուղղութեամբ իրականացող նախագծերի վրայ»,- արձանագրել է փորձագէտը:

Մովսիսեանը համեմատութեան կարգով կարեւորել է այն փաստը, որ սա այն դէպքում, երբ Հայաստանը նոյնիսկ արցախցի փախստականների հարցում չունէր եւ չունի նպատակային ծրագիր, կամ արցախահայութեան վերաբնակեցման հեռանկարով ուղղւածութիւն: «Այդ մարդկանց յարմարաւէտ բնակեցումը Սիւնիքում կարելի էր իրականացնել այնտեղ՝ նոր բնակելի համալիրների կառուցմամբ: Սա պաշտպանելու էր նաեւ Իրանի եւ Հայաստանի սահմանը Բաքւի հեռանկարային նկրտումներից, ինչպէս նաեւ Թուրքիայի եւ Իսրայէլի ծաւալապաշտական ներկայութիւնից: Սրանով վառ էր պահւելու նաեւ դիմադրութեան ու հայրենիքը պաշտպանելու ոգին: Հէնց այդպէս է հնարաւոր Ղարաբաղը փրկելու ուղղութեամբ քայլել: Արցախահայերի ժառանգութիւնը, ինքնութիւնն ու կերտած քաղաքակրթութիւնը սերնդէսերունդ փոխանցելու գաղտնիքը եւս դրա մէջ է»: